

զնա որպէս և ես ասացեալ էի նմա: Եւ նա ասացեալ էր, թէ վասն այն ասացեալ է զինքն զոլ տաճիկ, և կամիլ մկրտիլ, որպէս զի էլէիին կինն տիրութիւն առնիցէ նմա, և բերցէ ի պէջն, առ ի գնել զնա ի պաշտօնի իմիք, և այլն: Իսկ պատրի Գաւիթն ասաց ինձ, ոչ ումեք ասել զնմանէ, թէ իսկապէս այն տաճիկն իցէ, և այժմ նա կրթէ զնա յիրս հաւատոյ, և զգեցեալ է նա զգգեստս նէմէցի: ... Մինչ եկն [պաշպալովցի Տէր Մինասն] ի վեննա՝ պարծէր և ասէր, թէ Աղաչայ Պետրոսն 240,000 զօլաթայ դնէ, որպէս զի ինքն լինիցի (այսինքն Տէր Մինասն Խնկանոսեան) եպիսկոպոս ի վերայ պաշֆալովին. զի ինքեանք ոչ կամին ընդունիլ զգերապատուելի Տէր Մինասն կեռլացին եպիսկոպոս իրակութիւնք գերապատուելի տէր Մինասին արդէն իսկ կատարեցան, միայն սպասէ տիրօմային, և զալտեան թագաւորին ի լաքսէմպուրքէն, որպէս զի զնացեալ առաջի նորա՝ ընկալցի ի ձեռանէ նորա ի պարանոց իւր զխաչն եպիսկոպոսական, և զթագն հայրապետական, զոր տացէ Աստուած մեր:

Յամի Տեառն 1737
Յունիսի 15 ի վեննա

Մնամ պատրաստական յամենայնի
Նուաստագունեղ ծառայ
Հ. Թ. Յօհաննէսեան ի կար. Անդօնեան

P. S. Գարծեալ մեծ պատրաստութիւն գոյ պատերազմի աստէն. և այնքան ստիպով գործեն զնաւոն, մինչ զի զՊ նաւոն արդէն իջուցին ի ջուրն, և զՊ կալերսն ևս յուսամ զկնի ոմանց աւուրց իջուցանելոց, և զբազում մեծամեծ թօփս մերձ նաւուցն պատրաստ տեսի . . . :

Լ.

Կը վախճանի Հ. Յ. Բուզայեան Պեղկրատու մէջ և իրեն կը յաջորդէ Հ. Միք. Վ. Սերաստացի:
Սա կը զրկէ այս շահեկան նամակը ճանապարհէն, դեռ իր պաշտօնատեղին չհասած:

**Գերյարգեցելոյ Տեառն Տեառն Մխիթարայ Աբբայի
գորովագոչք ձօրոյ իմոյ**

. ի վաղիւն թերևս զնայցեմ ի սուրբ սևտեփաննոս՝ տակաւին ոչ տեսի վասն սբաղմանցս, նաև կայսրն մեծ հանդիսիւ գայ յեկեղեցին, լինին թափուռք, արձակմունք հրացանից, զի է տարեգարձական օրն ազատութեան վենայոյ ի տաճկաց, որ է 15 սեպ. և թէ հարցանէք ի կողմանէ պատերազմի, ոչ գոյ նոր ինչ, և ոչ ինչ զրոյց, այլ այս միայն, զի սէտիօն վիտինու յետս քարչեալ, զի փոխնչիփէ Լօրէնայոյ եկեալ է աստ, որ է փեսայ կայսերն. և եղբայրն նորին անկեալ ի մեծ հիւանդութեան ի ճանապարհին մնացեալ է և ի կողմն պօսնայոյ զոչ ինչ գործ գործեալ են, այլ անդ եղեալ կոտորմունք ի մեծագոյն թուոյ ասեն. յ.Գ.Ռ. [14,000], վասն առման օգուու մօսկօֆու աստ տօնանմայ արարեալ են. իբրու մի ամիս է: Նաև ասեն թէ թագաւորն տաճկաց զգիր ուղարկեալ կայսերն խնդրել առնել զխաղաղութիւն ի մէջ երիցն: Նաև գոյ աստ սուտ զրոյց, թէ վենետիկցին ևս առնէ պատերազմ ընդդէմ տաճկաց զի 40 նաւ զինուորեալ ուղարկեալ է ընդդէմ տաճկաց: — . . . վասն Խպրահիմին, այսինքն մարքօին. մարքօն եկաւ մեր լայիքօին հետ մեր վանդն, ինձ կամէր խոստովանել զիւր որպիսութիւնն, Հայր Թէոդորոսն ինձ ծանոյց զորպիսութիւն նորին.

Գրեցաւ յամի Տեառն 1737ին
Սեպտեմբերի 14ին
1 գիր ի վէնայոյ

Գերյարգութեան քում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սերաստացի